# ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Սովետական մարդկանց և առանձնապես հայերի համար Ֆրիտյոֆ Նանսենը մոտ է և թանկ ոչ միայն որպես գիտնական և բևեռախույզ, այլև որպես մի մարդ, որը, կարելի է ասել, միակն էր եվրոպական խոշոր գործիչներից, որ օգնության ձեռք մեկնեց թե՛ Վոլգայի սովյալներին և թե՛ հայ անապաստան գաղթականներին։ 1920—1921 թվականներին Վոլգայի սովյալներին օգնելու ուղղությամբ Նանսենի կատարած մեծ աշխատանքը բարձր գնահատվեց սովետական ժողովրդի ու կառավարության կողմից։ IX Համառուսական համագումարի անունից 1921 թ. Համառուսական Կենտգործկոմի նախագահ Միխայիլ Իվանովիչ Կալինինը Նանսենին պարգևատրեց Պատվոգրով, որի մեջ նշված էր, որ «ռուս ժողովուրդը իր հիշողության մեջ կպահի մեծ գիտնականի, բևեռախույզի և քաղաքացու՝ Ֆ. Նանսենի անունը»։*

*Նանսենը Ազգերի լիգայի առաջ մեծ եռանդով պաշտպանում էր հայերի դատը։ Նա պահանջ էր դնում միջոցներ ձեռք առնել աշխարհի տարբեր երկրներում անտուն, անհանգրվան թափառող հայերին հայրենիք վերադարձնելու համար։ Եվ Ազգերի լիգան չէր կարող չլսել «Եվրոպայի խղճի»՝ Նանսենի ձայնը։ 1925 թ. Ազգերի լիգան որոշում է կայացնում Նանսենի գլխավորությամբ Լիգային կից Աշխատանքի միջազգային բյուրոյի հանձնաժողով ստեղծել և ուղարկել Սովետական Հայաստան՝ հայ գաղթականներին տեղավորելու և բնակեցնելու հնարավորությունները տեղում ուսումնասիրելու համար։*

*Միջազգային հանձնաժողովը բաղկացած էր մի շարք աչքի ընկնող մասնագետներից. Անգլիայից՝ Դյուպուի* (Dupuis), *որը հայտնի էր որպես ջրաշինարարական աշխատանքների մասնագետ Եգիպտոսում, Իտալիայից՝ Պիո լե Սավիո* (Le Savio) *հիդրոտեխնիկական կառուցվածքների մասնագետ և Ֆրանսիայից՝ Գ. Կարլ* (G. Carle) *սուբտրոպիկական կուլտուրաների ականավոր մասնագետ։ Հանձնաժողովի նպատակն էր տեղում՝ Սովետական Հայաստանում ուսումնասիրել և պարզել ամայի, անջրդի հողերի ոռոգման ու նրանց օգտագործման հնարավորությունները։ Նախքան իր գլխավորած հանձնաժողովի անդամների հետ Երևան մեկնելը, Նանսենը հատուկ նամակով դիմում է Մոսկվա՝ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինին, խնդրելով դյուրացնել իր աշխատանքը։ Արշավախումբը հունիսի 17-ին ժամանում է Լենինական։ Այստեղ Հայաստանի կառավարության անունից հյուրերին դիմավորում և ապա արշավախմբի աշխատանքներին մասնակցում է ռեսպուբլիկայի հողագործության ժողովրդական կոմիսար Արամայիս Երզնկյանը։*

*Հունիսի 17-ից մինչև հուլիսի 3-ը Նանսենի հանձնաժողովը մնաց Սովետական Հայաստանում, մանրամասն ծանոթացավ երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքին, մասնավորապես կատարվող ու նախագծվող ջրատնտեսական աշխատանքներին։ Նա ծանոթացավ Մեծ և Փոքր Սարդարապատի անջրդի տափաստաններին, Երևանի շրջակայքի գետերի հողատարածություններին, պարզեց այդ հողերի ոռոգման ու յուրացման հնարավորությունները, այդ վայրերը հայ գաղթականներով բնակեցնելու միջոցառումները։*

*Հանձնաժողովը մանրամասն ծանոթացավ Մեծ Սարդարապատի պրոբլեմին և նրա իրագործման հնարավորություններին, գետերի ոռոգման նախագծին, Փոքր Սարդարապատի՝ Հոկտեմբերյանի ջրանցքի նախագծին և շինարարությանը, որը այդ ժամանակ նոր էր սկսվում։*

*Տեղի ունեցավ Նանսենի հանձնաժողովի և Խորհրդային Հայաստանի կառավարության անդամների հետ խորհրդակցություն՝ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ս. Համբարձումյանի նախագահությամբ (տե՛ս վավերագիր № 1)։ Հանդիպման ժամանակ քննարկվեցին երկու կողմերին հետաքրքրող հիմնական հարցերը*[1]*։ Նանսենը հանձնաժողովի կողմից*

---

[1] *Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության կենտրոնական արխիվում (Հայկ. ՍՍՌ ՀՌՍՇԿԱ*—ЦГАОР СС Арм. ССР*) պահվում են բավական թվով կարևոր փաստաթղթեր, որոնք վերաբերում են Նանսենի հանձնաժողովի՝ Երևանում կատարած աշխատանքներին։*

այնուհետև, թե իրենց ուսումնասիրությունը ապացուցել է, որ Սարդարաբադի (խոսքը Մեծ Սարդարաբադի մասին է.— ր. Շ.) ոռոգման ծրագիրը, անշուշտ, իրագործելի է և կարող է մշակելի ու բարեբեր դարձնել ընդարձակ տարածություններ։ Սակայն նրա իրագործումը կպահանջի այնպիսի մի գումար, որը ներկայումս հնարավոր չէ հայթայթել։ Այդ հողային աշխատանքների մի մասը հետագայում Սովետական կառավարությունը իրագործեց Թալինի, Արզնի-Շամիրամի և այլ ջրանցքների կառուցմամբ։ Առաջիկա տարիներին Ախուրյանի ջրամբարի կառուցումը հնարավորություն կտա յուրացնել ևս 22060 հեկտար՝ Մեծ Սարդարաբադի անմշակ հողատարածություններից։

Նանսենն իր հանձնաժողովի անդամների հետ վերադարձավ Եվրոպա, տանելով բավական թվով ոռոգման նախագծեր։ Սակայն չնայած «Եվրոպայի խղճի» հեղինակությանը, նա չկարողացավ հայերի համար անել այն, ինչ ծրագրում էր։ Իմպերիալիստական պետությունները և նրանց ղեկավար գործիչները հավատարիմ իրենց էությանը չկատարեցին իրենց խոստումները։ Նանսենը Ազգերի լիգային ներկայացրեց մանրամասն զեկուցագիր իր հանձնաժողովի՝ Հայաստանում կատարած շրջագայության մասին։ Իր զեկուցման մեջ Նանսենը Ազգերի լիգայի հատուկ ուշադրությունն է հրավիրում Խորհրդային Հայաստանում կարճ ժամանակամիջոցում կատարված մեծ շինարարությունների և բարեփոխումների վրա.

Ազգերի լիգայի խորհուրդը, լսելով Նանսենի զեկույցը և նկատի ունենալով Լիգայի ընդհանուր ժողովի 1925 թ. սեպտեմբերի 26-ի բանաձևը՝ հայ գաղթականներին Խորհրդային Հայաստանում կամ այլուր տեղավորելու վերաբերյալ, որոշեց նշանակել 5 հանձնակատարներ, որոնց պարտավորեցրեց վերջնականապես ճշտել ծրագրված միջոցառումների (ոռոգման աշխատանքների) կարևորությունը և առաջարկությունները ներկայացնել կատարվելիք աշխատանքների իրագործման համար։

Ֆրանսիայում Սովետական Միության դիվանագիտական ներկայացուցչության խորհրդատու Սեմյոն (Սիմոնիկ) Փիրումյանի զեկուցագիրը (տե՛ս փաստաթուղթ № 2), որը ուղղված էր կոմունիստական կուսակցության Անդրկովկասի երկրային կոմիտեին և Հայաստանի ԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին, ինչպես նաև մի շարք այլ փաստաթղթեր, ցույց են տալիս, թե ինչ մեծ ջանքեր էր գործ դնում և ինչ մեծ դժվարությունների էր հանդիպում Նանսենը՝ Խորհրդային Հայաստանում նախագծվող ջրաշինարարական աշխատանքների իրականացման և ոռոգվելիք տարածությունների վրա հայ գաղթականներին բնակեցնելու հետ կապված անհրաժեշտ դրամական միջոցներ ձեռք բերելու համար։ Այդ գործը գլուխ բերելու նպատակով Ազգերի լիգայի կողմից կազմակերպված էր հատուկ հանձնաժողով՝ Ֆրանսիայի ներկայացուցիչ սենատոր Պամսի նախագահությամբ։ Բանն այն է, որ Սովետական Հայաստանում կատարվելիք աշխատանքների և այնտեղ հայ գաղթականներին բնակեցնելու համար հարկավոր էր մոտ 15 000 000 ռուբլի (ոսկե դրամով)։ Այդպիսի մեծ գումար ստանալ բարեգործական կազմակերպություններից կամ առանձին բարեգործների կողմից անհնար էր։ Անհնար էր նաև ստանալ Բեռլինի բանկում գտնվող պետությունների կողմից բռնագրավված 5 միլիոն ֆունտ ոսկեդրամը, որը, եղած տեղեկությունների համաձայն, բացառապես հայկական գումարներից էր կազմված։ Մեծ պետությունները կատեգորիկորեն մերժում էին ամենափոքր օգնությունը «սիրելի գաղթականներին», որոնց հանդեպ նրանք հանձն էին առել այնքան մեծ պարտավորություններ։

Մնում էր մի ելք՝ փոխառություն ստանալ եվրոպական բանկերի միջոցով։ Սակայն վերջիններս պահանջում էին որոշ երաշխավորություն՝ պետությունների կողմից։ Այստեղ ևս իմպերիալիստական պետությունները չկատարեցին իրենց պարտավորությունները։ Մերժեց առաջին հերթին Անգլիան, նրա օրինակին հետևեցին Ֆրանսիան և մյուս մեծ պետությունները։ Եվ այսպիսով, երկար բանակցություններից և գեղեցիկ ճառերից հետո, անհրաժեշտ փոխառությունը այդպես էլ չիրագործվեց։

Միայն Սովետական կառավարությունը հետագայում իրականացրեց մեծ ջրաշինարարական աշխատանքներ, կառուցելով Արտաշատի, Հոկտեմբերյանի, Ստորին Հրազդանի, Արզնի-Շամիրամի և այլ ջրանցքները։

Գ. Վ. ՇԻՐՄԱԶԱՆ

# ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

№ 1

Հայկական ՍՍՌ ժողկոմխորհին կից պետպլանական հանձնաժողովի և Ֆ. Նանսենի հանձնաժողովի՝ 1925 թ. հուլիսի 1-ի համատեղ նիստի արձանագրություն.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Ժողկոմխորհին կից պետպլանական հանձնաժողովի և դոկտոր Նանսենի հանձնաժողովի 1925 թ. հուլիսի 1-ի միացյալ նիստի*[1]

*Նախագահում է՝ ընկ. Ս. Համբարձումյան։*

*Ներկա են՝ ընկ. Ա. Մռավյան, դոկ. Նանսեն, հանձնաժողովի մյուս անդամները և թարգման՝ ճարտարապետ Գ. Գուրգենյան.*

*Քարտուղարում է՝ Ա. Խանկարյան։*

Դոկ. Նանսեն.—*Մենք պատրաստում ենք մի տեխնիկական զեկուցագիր*[2] *արտասահմանի համար, որի պատճենը կտրամադրենք Հայաստանի կառավարությանը։*

Ընկ. Մռավյան.—*Ցանկալի է իմանալ, թե հանձնաժողովը վերջնականապես ո՞ր ծրագրի իրագործման վրա է կանգնում։*

Դոկ. Նանսեն.—*Ինչպես ես անցյալ օրը ասացի ընկ. Երզնկյանին, արտասահմանում գտնված հայ գաղթականությունը Հայաստան տեղափոխելու նպատակով անհրաժեշտ դրամական միջոցներ գտնելու համար կա երեք միջոց.*

*1. Հանգանակություն անել բարեգործական ընկերությունների միջոցով.*

*2. Ստանալ այդ միջոցները եվրոպական պետություններից վարկի ձևով կամ իբրև նպաստ.*

*3. Իբրև փոխառություն վերցնել եվրոպական բանկերից։*

*Առաջին ուղին դժվար իրագործելի է, որովհետև անհնար է այդպիսի մի խոշոր գումար հավաքել հանգանակության միջոցով, ինչպիսին հարկավոր է այդ ծրագրերը իրագործելու նպատակով։ Ճիշտ է, այդ միջոցով որոշ գումար կարելի է ժողովել, բայց այդ կլինի համեմատաբար շատ չնչին։ Այդ գումարը հնարավոր կլինի գործադրել գաղթականության տեղավորության հետ կապված աշխատանքների համար։ Երկրորդ միջոցը կառավարություններից միջոցներ ստանալու միջոցը՝ նմանապես պետք է համարել դժվար իրագործելի, քանի որ եվրոպական պետությունները իրենք, շնորհիվ իրենց արդեն կարծիքների*, մեծ չափով ծավալված գործազրկության և այլն, դրամի մեծ կարիք ունեն։ Այդ պատճառով էլ ես և հանձնաժողովի մյուս անդամները մեծ հույս չունենք դրա վրա։*

* *Այդպես է բնագրում. ըստ երևույթին, պետք է լինի՝ «արդեն ունեցած կարծիքների»։*

Որպես մասնավոր կարծիք հույս ունենք գաղթականության տեղափոխության վրա օգտագործել այն գումարները, որոնք թողնված են եվրոպական բանկերում հայերի կողմից Անատոլիայից գաղթելուց հետո[3]։ Այդ գումարների վրա մեծ հույսեր ունի նաև տաճկաց կառավարությունը, և հավանական է, որ նա ևս պահանջ դնի դրա վրա։ Այդ գումարի չափը ինձ հայտնի չէ, սակայն պետք է ենթադրել, որ չափազանց մեծ է և եվրոպական բանկերը չեն շտապում այդ գումարները վերադարձնելու, քանի որ նրանք ոչ մի տոկոս չեն վճարում դրա համար։ Այդ դրամների տերերի կողմից հատուկ հանձնաժողովներ են եկել Եվրոպա և դիմել, որպեսզի աջակցեն նրանց ստանալու այդ գումարը, պայմանով, որ գումարի որոշ մասը նրանք կհատկացնեն հայ գաղթականներին։ Երրորդ ուղին փոխառություն է, որի իրականացումը մեծ մասամբ կախված է նաև Հայաստանի կառավարությունից։ Մինչև փոխառության հարցին անցնելը ես միջանկյալ կերպով խորհուրդ կտայի նաև օգտագործել կոնցեսիաները։ Օրինակ, ինչ-որ պրինց Մակինսկի[4] առաջարկություն է արել ինձ վերցնել Սարդարապատի դաշտի ոռոգումը կոնցեսիոն պայմաններով։ Ես, իհարկե, առանց Հայաստանի կառավարության կարծիքը այդ մասին իմանալու, ոչ մի պատասխան չեմ տվել նրան։

Ընկ. Մռավյան.—Մինչև հիմա Սարդարապատի դաշտի ոռոգման մասին ոչ ոքի կողմից լուրջ առաջարկություն չի եղել և կասկածում ենք, որ այդ Մակինսկու առաջարկը ևս լուրջ լինի։ Նա մինչև օրս այդ մասին մեզ ոչ մի առաջարկ չի արել։ Անկախ գաղթականական հարցից մենք հնարավոր ենք համարում Սարդարապատի դաշտի ոռոգման գործը կոնցեսիոն պայմաններով տալու, որովհետև կառավարությունը ինքը այժմ բավական միջոցներ չունի այդ մեծ ծրագիրը կատարելու։

Ընկ. Նանսեն.—Սարդարապատի դաշտի ոռոգման ծրագիրը մեզ առաջարկած ծրագրերից ամենամեծը, թանկարժեքը և ուստի դժվար իրագործելին է։ Այդ պատճառով էլ ես դժվարանում եմ սկսել մեր գործը արտասահմանում այդ ծրագրից։ Ես նպատակահարմար եմ համարում սկսել ամենաթեթևներից, ինչպիսին է.—

ա) Արուհայաթի ջրանցքի ծրագիրը, որը պահանջում է 2 000 000 (երկու միլիոն) ռուբլի և ոռոգում է 19 000 դես. հող։

բ) Ղարասուի ճահիճների չորացումն ու դաշտի ոռոգումը, որը պահանջում է 1 500 000 ռուբլի և տալիս է 10 000 դես.

գ) Զանգիբասարի հողամասի չորացումն ու ոռոգումը, որը պահանջում է 600 000 ռուբլի։ Բացի դա, իբրև պահեստի գումար պետք է ունենալ նաև 200 000 ռուբլի. այդպիսով, ուրեմն, 33 000 դես. հող կարգի բերելու համար մոտավորապես անհրաժեշտ է 5 000 000 ռուբլի։ Սա մի կոպիտ մոտավոր նախահաշիվ է, ես մտադրություն ունեմ կանգ առնելու այս երեք նախագծերի վրա և կարծում եմ, որ այդ հողերի վրա կարելի է տեղավորել մոտավորապես 25—30 000 գաղթականներ։

Ի միջի այլոց ես շեշտում եմ, որ այդ 33 000 դես. հողի վրա պետք է տեղավորվեն ոչ միայն գաղթականներ, այլ հավանական է, որ լինեն նաև տեղացիներ, սակայն գաղթականները պետք է կազմեն ճնշող մեծամասնություն։

Թվում է ինձ, որ դրանով մենք լուծած կլինենք արտասահմանում գտնված հայ գաղթականների ամենասուր կարիքները։

Այս ծրագրերը իրականացնելուց հետո հավանական է մենք կանցնենք ավելի մեծ և թանգարժեք ծրագրերին։

Հիմա անցնենք այն հարցին, թե որտեղի գաղթականները և ինչպես պետք է տեղավորվեն։ Առաջին հերթին կտեղավորվեն 15 000 գաղթականներ, որից 5 000 Պոլսից և 10 000 Հունաստանից։



ՀՍԽՀ ժողկոմխորհին կից գաղթականական հանձնաժողովի նիստը՝ Ֆ. Նանսենի կոմիտեի մասնակցությամբ

Հայաստանից հեռանալուց առաջ ես կուզեի պարզել այն 800 գաղթականների դրությունը, որոնց համար կա հանգանակած 11 000 դոլար։ Դրանից 5 000 դոլարը գտնվում է Պոլսում՝ 350 գաղթականների համար, իսկ մյուս 150 հոգու համար հավաքած 6 000 դոլարը գտնվում է Ամերիկայում և ամեն րոպե կարելի է ստանալ ու օգտագործել այդ գաղթականների համար։

Ընկ. Համբարձումյան.—Մենք այժմս էլ գաղթականներ ընդունում ենք, թվով 1500 հոգի. շատ հավանական է, որ այդ 800 հոգին գտնվում են նրանց թվում. եթե նրանց մեջ չլինեն, մենք անհրաժեշտ միջոցներ ձեռք կառնենք դրանց ևս տեղափոխելու Հայաստան։ Եթե կտան մեզ տեղեկություններ այդ գաղթականների ով և որտեղից լինելը*, մենք կկարգավորենք նաև դրանց հարցը։

Դոկ. Նանսեն.—Կարծում եմ այժմս կարող ենք անցնել արդեն փոխառության խնդրին, և եթե մենք այդ հարցում եկանք մի որևէ համաձայնության, այդ դեպքում մենք կներկայացնենք կառավարությանը մի մեմորանդում, որտեղ կառաջադրենք մեր պայմանները։

Փոխառության մասին ես կխոսեմ սկզբունքորեն։ Հունաստանի գաղթականների տեղավորման գործում իմ ունեցած փորձը տալիս է ինձ ասելու, որ

* Այդպես է բնագրում. ըստ երևույթին, պետք է լինի «որտեղից լինելու մասին»։

միակ ուղին և նպատակահարմար միջոցը դա փոխառությունն է։ Մեր առաջարկած ծրագրերի իրագործման համար (ոռոգում և չորացում) առաջին-հերթին հարկավոր է 5 000 000 ռուբլի։

Փոխառության հետ կապված է դրա ամորտիզացիան (մարումը) և տոկոսների խնդիրը։ Ընկ. Երզնկյանը երեկ առաջարկում էր փոխառություն վերցնել տասը տարով, որպիսի ժամանակամիջոցը ես համարում եմ շատ փոքր այդպիսի մի գործի համար։ Այժմ եթե դուք ցանկություն կհայտնեք ժամանակամիջոցը երկարացնելու, ես կպաշտպանեմ այդ հարցը։ Ինչ վերաբերում է տոկոսների խնդրին, կարծում եմ որ դա կլինի ոչ պակաս, քան 10 տոկոս, քանի որ այժմ Եվրոպայում այդ տոկոսը բարձր չի համարվում։ Փոխառության հետ կապված 3-րդ հիմնական հարցը, դա փոխառության ապահովության հարցն է, որը ինչպես ընկ. Երզնկյանը ասել է, կարելի է ստանալ թե Հայաստանի կառավարության կողմից և թե՛ կարիք եղած դեպքում նույնիսկ ՍԽՀՄ կառավարության կողմից։

Հետևյալ խնդիրը, որը նույնպես կապված է փոխառության հետ, դա կոնտրոլի խնդիրն է։ Դրամատերերը կցանկանան ունենալ Հայաստանում երեք հոգուց բաղկացած մի մարմին, որը պետք է հսկի, որպեսզի բաց թողնըված գումարները ծախսվեն իրենց ուղղակի նպատակների համար։ Այդպես է եղել Հունաստանում, կարծում եմ դրամատերերը կպնդեն, որպեսզի Հայաստանում ևս այդպես լինի։ Ես ոչ մի րոպե չեմ կասկածում, որ Հայաստանի կառավարությունը բաց թողնված գումարները ուրիշ նպատակների չի գործադրի, բայց քանի որ մենք գործ ունենք դրամատերերի հետ, պետք է հաշվի առնենք նաև նրանց հոգեբանությունը։

Ինչպես ասացի, 5 000 000 ռուբլի բավական է միմիայն այդ 33 000 դես. հողը ոռոգելու և չորացնելու համար, սակայն պետք է մտածել* նաև այդ տեղափոխվող գաղթականության տեղավորման հետ կապված մյուս ծախսերը, այն է՝ տներ շինելը և ինվենտար ձեռք բերելը։ Մեզ հետաքրքրում է այժմ, թե կառավարությունը ինչպես է մտադիր այդ հարցը կանոնավորել, հնարավորություն ունի՞ արդյոք ինքը երկարատև վարկի միջոցով կարգավորել այդ, թե ոչ։

Գաղթականության տեղափոխության հետ կապված ես կուզեի պարզել նաև մի շարք ուրիշ հարցեր, այն է.—

ա) Եկող գաղթականությունը իր ամբողջ ունեցվածքը թե Հայաստանի և թե խորհրդային մյուս երկրների սահմաններով պետք է անցկացնի առանց որևէ մաքսատուրքի։

բ) Խորհրդային տերիտորիայի սահմաններում գաղթականների փոխադրությունը կատարվում է ձրի, իսկ նրանց մինչև խորհրդային սահմանները հասցնելու ճանապարհածախսը, կարծում եմ, բարեհաջող լուծումն կստանար բարեգործական մարմինների միջոցներից հոգալու տեսակետից։

գ) Գաղթականներին տրվելիք հողը պետք է լինի բոլորովին ձրի։

դ) Երեք տարի շարունակ այդ գաղթականությունը ազատ պետք է լինի ամեն տեսակի պետական տուրքերից և հարկերից, բացի այն գումարներից, որոնք պետք է վճարվեն՝ իբրև փոխառության տոկոսների մասում*։

* Այդպես է բնագրում. ըստ երևույթին, պետք է լինի «հոգալ»։
* Այդպես է բնագրում. ըստ երևույթին, պետք է լինի «մարում»։

ե) Գաղթականությունը Հայաստանում տեղավորելուց հետո մեկ կամ երկու տարի պետք է ազատվի զինվորական ծառայությունից

զ) Այդ 33 000 դեսյատին հողի վրա բնակվելու գերապատվությունը տրվում է տեղափոխվող գաղթականներին։

Սա բնույթն է, բացի այդ ես համոզված եմ, որ փոխառությունը հաջողացնելուց հետո հնարավոր կլինի մի որոշ գումար ձեռք բերել բարեգործական մարմինների միջոցով՝ գաղթականության տեղավորման հետ կապված ծախսերը հոգալու համար։

Բացի այդ կարևոր եմ համարում նշանել, որ այդ հողամասերը կարգի բերելու գործում և աշխատանքները (բարձր կվալիֆիկացիա չպահանջող) պետք է տարվեն զինվորապես եկվոր գաղթականների միջոցով։

Ընկ. Համբարձումյան.—Ես եկա այն եզրակացության, որ համաձայնագիրը հրաժարվում է Սարդարապատի ջրանցքից* և անցնում է մյուս մանր ջրանցքներին, որով հնարավորություն կտրվի տեղավորել միմիայն 15 000 գաղթական

Դոկ. Նանսեն.—Թվում է ինձ, որ այժմ ավելի մեծ ջրանցքներով զբաղվելը աննպատակահարմար կլինի։

Ընկ. Համբարձումյան.—Դա համաձայնագրի վերջնական որոշումն է, թե հնարավոր կլինի դեռևս վերադառնալ Սարդարապատի ոռոգման խնդրին։

Դոկ. Նանսեն.—Ես վերջնական պատասխան ձեզ տալ չեմ կարող, բայց կասեմ, որ համաձայնագիրը արդեն իր համար գործնական ծրագիր է համարում վերը հիշած աշխատանքները և մտադիր է այդ ուղղությամբ էլ աշխատելու։

Ընկ. Համբարձումյան.—Վերը հիշած 33 000 դես. հողը կարգի բերելուց հետո այդտեղ 15 000 գաղթականություն տեղավորելու համար անհրաժեշտ կլինի սկզբնական ծախսեր մոտ 3 000 000 ռուբլի, հաշվելով ամեն մեկի վրա 200 ռուբլի (ինվենտարիզացիա)։ Ինվենտարիզացիայի խնդիրը մեզ մոտ, Հայաստանում չափազանց ծանր խնդիր է, քանի որ մեր գյուղացիության 50 տոկոսից ավելին ինվենտարով չի ապահովված։

Ընկ. Մռավյան.—Չենք կարող եկվոր գաղթականների տեղավորմանը ինվենտարիզացիայի խնդիրները խորհրդային կառավարության միջոցներով լուծել։ Այդ ծախսերը պետք է իրենց վրա վերցնեն արտասահմանի բարեգործական և այլ հիմնարկները։

Դոկ. Նանսեն.—Քանի որ այդ մասին ձեր առաջարկը շատ տեղին է, համաձայնագիրը պատրաստ է հարց հարուցել նաև այդ 3 000 000 ռուբլու մասին, այսինքն՝ ընդամենը 8 000 000 ռուբլու մասին։

Ընկ. Համբարձումյան.—Այժմ անցնենք փոխառության խնդրին։ Դոկ. Նանսենը շատ ճիշտ է մոտենում խնդրին, որ միակ ճիշտ ուղին դա փոխառության ուղին է։ Մյուս կողմից Հայաստանի կառավարությունը, իր անվիճելի իրավունքն է համարում օգտվելու այն գումարներից, որոնք թողնված են Անատոլիայից գաղթած հայերի կողմից և պետք է ծառայեն գաղթականների տեղավորման նպատակների համար։

Դոկ. Նանսեն.—Ես մեծ հույս չունեմ, որ կարողանանք այդ կետերից օգտվել, բայց և այնպես այդ ուղղությամբ աշխատանքներ կտանենք և դուցե կարողանանք բարեհաջող վախճանի հասցնել՝ շնորհիվ իմ այնտեղ ունեցած ազդեցության։

* Ակնարկվում է Մեծ Սարդարապատի ջրանցքի իրագործումը։

Ընկ. Համբարձումյան.—*Մենք էլ հավատացած ենք, որ դոկ. Նանսենի հասարակական կշիռը կարող է մեծ դեր խաղալ այդ հարցի դրական լուծման խնդրում։*

*Փոխառության խնդիրը այնչափ լուրջ խնդիր է, որ այժմ մեր այս խոսակցությունը այդ հարցի շուրջ պետք է համարել նախնական։ Սկզբունքով մենք փոխառությունը ընդունելի ենք համարում այդ նպատակի համար։ Ինչ վերաբերում է գումարի չափին, դա վերջնականապես կպարզվի աշխատանքների վերջնական ծրագիրը ունենալուց հետո։*

*Փոխառության մարման ժամանակամիջոցի նկատմամբ մենք էլ ձեզ հետ համակարծիք ենք և գտնում ենք, որ այդպիսի մի գործի համար տասը տարին շատ քիչ է, դրա համար հարկավոր է ոչ պակաս քան 15—20 տարի։*

Դոկ. Նանսեն.—*Ժամանակամիջոցի մասին ես վերջնական խոսք առնել չեմ կարող, բայց կաշխատեմ հաջողացնել այդ ձեր առաջարկը։*

Ընկ. Համբարձումյան.—*Տոկոսները դա փոխառության հիմքն է կազմում, ասենք որ տասը տոկոսը մեզ համար շատ ծանր է, ցանկալի կլիներ այդ տոկոսները իջեցնել։ Բայց եթե այդ հնարավոր չեղավ, մենք պետք է դրա հետ համաձայնենք։*

Դոկ. Նանսեն.—*Ես տոկոսների մասին հաստատ տեղեկություններ չունեմ, բայց հենվելով Հունաստանի փորձի վրա կարծում եմ, որ 10 տոկոսից պակաս չի լինի։*

*Փոխառությունը գլխավորապես կիրականացնի Անգլիական պետական բանկը։*

Ընկ. Համբարձումյան.—*Անցնենք փոխառության ապահովության խնդրին, Մեր սահմանադրության մեջ կա մի կետ. թե Հայաստանի կառավարության և թե Սոցիալիստական Խորհրդային Միության կառավարության կողմից փոխառություն անում է ՍԽՀՄ կառավարությունը։ Երաշխավորություն կարելի է տալ թե մեր և թե նրանց կողմից։ Սակայն այդ մասին մենք ՍԽՀՄ կառավարության հետ դեռ խոսակցություն չենք ունեցել։ Մեզ համար միանգամայն պարզ է, որ առանց երաշխավորության փոխառության մասին խոսել անգամ չի կարելի։*

*Քաղաքական կոնտրոլի մասին խոսել անգամ մենք անթույլատրելի ենք համարում։ Ծայրահեղ դեպքում հնարավոր ենք համարում թույլատրել առևտրական և տեխնիկական կոնտրոլ։*

Դոկ. Նանսեն.—*Պարզ է։ Այս խնդրում եվրոպական պետությունների վերաբերմունքից շատ բան է կախված և նրանց աջակցությունը մեծ չափով կնպաստի փոխառության հեշտ իրականացմանը։ Ես մտադիր եմ աշխատելու և այդ ուղղությամբ։ Իբրև ապացույց ես կբերեմ հունական գաղթականության տեղավորման հարցը, որի մեջ եվրոպական պետությունները իրենց արտաքին գործոց մինիստրությունների միջոցով հարկադրեցին բանկերին իրականացնել փոխառությունը։*

*Ի միջի այլոց իբրև խորհուրդ պետք է ասեմ, որ այդ կոնտրոլը ձեզ չի կարող խանգարել։*

Ընկ. Համբարձումյան.—*Մենք սկզբունքով չենք առարկում դրա դեմ, բայց կոնտրոլի ձևը պետք է պարզել ապագա բանակցությունների միջոցին։*

Դոկ. Նանսեն.—*Եթե իմ կարծիքը հարցնեն, բավական է ունենալ վերահսկողության համար միայն մեկ մարդ։*

Ընկ. Համբարձումյան.—Հավատացած ենք, որ դոկ. Նանսենը չի կասկածում, որ բաց թողնված գումարները անշուշտ կգնան իրենց ուղղակի նպատակների համար։

Դրանց ամենալավ ապացույցը մեր Շիրակի և մյուս ջրանցքներն են, որոնց կառուցելու համար մենք, եթե կարելի է այսպես ասել, միջոցներ գտել ենք՝ մեր մսից կտրելով։

Դոկ. Նանսեն.—Դուք միանգամայն ճիշտ եք ասում, որ ես դրա մեջ համոզված եմ, բայց և այնպես քանի որ Հունաստանի փորձն ունենք, պետք է հաշտվել դրա հետ։

Ընկ. Համբարձումյան.—Համաձայն ենք։

Ինչ վերաբերվում է գաղթականությանը ձրի հող տալուն, իբրև ինֆորմացիա պետք է հայտնեմ, որ ընդհանրապես աշխատավոր գյուղացիությանը մեզ մոտ հող տրվում է բոլորովին ձրի։ Քանի որ մենք գաղթականներին համարում ենք աշխատավոր գյուղացիներ, ուստի անշուշտ նրանց ևս հող կտրվի ձրիաբար։

Գաղթականության ունեցվածքը անմաքս թույլատրելը ևս ընդունելի է, քանի որ մենք ունենք այդ մասին համապատասխան օրենսդրություն։

Գաղթականներից մեկ-երկու տարի զինվոր չվերցնելու մասին այժմ վերջնական պատասխան չենք կարող տալ, սակայն պետք է ասենք, որ գաղթականության նկատմամբ կգործադրվեն ընդհանրապես աշխատավորության նկատմամբ գործադրվելիք արտոնությունները։ Բացի այդ անհրաժեշտ է ընդգծել, որ մեր զինվորական ծառայությունը չափազանց հարմարեցված է աշխատավորության շահերին և ոչ մի կերպ չի խանգարի նրանց աշխատանքներին։

Վերջացնելով մեր խոսակցությունը ես անհրաժեշտ եմ համարում ասել, որ, ինչպես դուք նկատած կլինեք, գաղթականության ընդունելության գործում մեր կողմից ոչ մի խոչընդոտ չկա և հարցը մի քիչ ուշանում է բացառապես միջոցների սղության պատճառով։

Դոկ. Նանսեն.—Մենք տեսնում ենք, որ դուք գաղթական եղբայրների համար անում եք ավելին, քան կարող եք։ Ցանկանում ենք, որպեսզի ձեր գաղթական եղբայրները շուտով միանան ձեզ հետ։ Շնորհակալություն Հայաստանի կառավարությանը։

Ընկ. Համբարձումյան.—Ընդունեցեք շնորհակալություն նաև հայ ժողովրդի ու այն գաղթականների կողմից, որոնց համար դուք այդքան ջանք եք թափում։

Ես հավատացած եմ, որ դոկ. Նանսենը հյուսիսային ժողովուրդների հատուկ համառությամբ կհաղթահարի այն բոլոր դժվարությունները, որ այդ գործում կառաջանան*։

* Հայկ. ՍՍՌ ՀԽՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3. գ. 335, թ. 28—37։

№ 2

Ֆրանսիայում Սովետական Միության դիվանագիտական ներկայացուցչության խորհրդատու Սեմյոն (Սիմոնիկ) Փիրումովի նամակը՝ ուղղված կոմունիստական կուսակցության Անդրկովկասի երկրային կոմիտեին և ՀՍՍՀ ժողկոմխորհին:

Копия с копии

г. Париж 27 сентября [19]25 г.

*Уважаемый товарищ!*

По вопросу о проектах д-ра Нансена касательно займа на предмет возвращения армянских беженцев, имею сообщить следующее.

После поездки в Армению др. Нансен и сопровождающие его эксперты Лиги наций составили доклад, который и был предложен вниманию общего собрания Лиги Наций. Содержание этого доклада сводится к признанию возможности и целесообразности орошения и дренажа земель в Армении и необходимости устройства займа с этой целью в размере 900 000 фунтов стерлингов. (Доклад при сем прилагается).

Положительный доклад др. Нансена подвергся в кругах Лиги Наций внимательному обсуждению.

10-го сентября доклад этот был заслушан Совещательным Комитетом при отделе о беженцах Международного Бюро Труда, под председательством Альбера Тома[5]. На этом совещании присутствовали также представители армянских общественных организаций за границей и иностранных учреждений помощи армянам. Доклад и проекты Нансена вызвали всеобщее сочувствие и единогласное одобрение. Представители армянской общественности отметили в своих речах, что вполне сочувствуют проекту др. Нансена и обещают оказать всяческую моральную и материальную поддержку. В том же духе принужден был высказаться и председатель бывш. Правительства Армении. Лига же армянофилов и иностранные организации помощи, находя, что осуществление этих проектов должно быть произведено во имя «элементарной справедливости по отношению к армянам», которым «много было обещано и ничего не было дано», со своей стороны обещали этому делу всяческую поддержку.

12-го сентября на общем собрании Лиги Наций д-р Нансен сделал доклад об армянских беженцах и представил организацию этого дела в Армении. Произнеся обстоятельную речь в защиту своего проекта, он предложил передать его доклад в 5-ю «Гуманитарную Комиссию» — для выработки окончательной резолюции. Во всех своих речах д-р Нансен с величайшей похвалой отзывался о Советском Правительстве Армении, как о заслуживающем полного доверия, способном и энергичном, выражает свое удивление его энергии и практичности. Проведение Ширакского канала как он, так и его специалисты считают поразительным, созданным при незначительных материальных средствах, делающим честь армянским инженерам. По мнению сопровождающего д-ра Нансена эксперта Чарльза Дюпюи, известного авторитета в деле орошения, работа Армянского

Правительства в стране дает полную уверенность, что предстоящее дело ирригации находится в Армении в руках специалистов, заслуживающих полного доверия и практически доказавших умение справиться с труднейшими задачами. Это мнение было поддержано и французским экспертом, представителем Министерства Земледелия инженером Карлем.

18-го сентября доклад д-ра Нансена обсуждался на заседании 5-й Комиссии. Краткий протокол комиссии при сем прилагается. На этом заседании эксперт Дюпюи подтвердил свои соображения в защиту проекта. Обстоятельно защищал проект также и сам д-р Нансен, добавивший на этот раз указание на 5 миллионов фунтов стерлингов, депонированных Турцией в Берлинском Банке, которые, даже по мнению Болдвина, большей частью принадлежат армянам. В защиту проекта выступил и Альбер Тома, указав, что, по общему мнению, а также по мнению армянских деятелей, к какой бы то ни было партии они не принадлежали, Советское Правительство Армении есть действительное народное Правительство, на гарантию которого можно вполне положиться. Он полагал бы, что вопрос очень упростится, если заем будет гарантирован великими державами или будет находиться под покровительством Лиги наций. Для тщательного изучения вопроса доклад д-ра Нансена передается в II комиссию из 9 лиц.

Совершенно сумбурную речь, против проектов произнес Сербский делегат Стефан Радич[6], высказавшийся против на том основании, что никакой Армянской Республики не существует... Заявление Радича произвело очень тягостное впечатление как на самого Нансена, так и на присутствующих.

В II Комиссии и развернулись главные прения, выяснившие следующую картину отношения держав к проекту. Делегат Великобритании Леди Аттол от имени своего Правительства заявил, что он не может ни дать, ни даже гарантировать заем для какой бы то ни было. Советской Республики. Точка зрения Французского Правительства, выраженная его делегатом Памсом[7], сводилась к тому, что Франция готова гарантировать заем, но при непременном условии согласия Англии и совместной гарантии. Итальянский делегат, частным образом, сообщал армянским делегатам и д-ру Нансену, что он разделяет французскую позицию. Остальные члены II/Комиссии относились к проекту и к вопросу о гарантии займа вполне сочувственно. Такая непримиримая позиция Английского правительства, и, как говорит д-р Нансен, «неожиданная для него», вынудила защитников проекта займа, т. е. самого Нансена, Альбера Тома и докладчика по этому вопросу в В комиссии Дебрукера, отложить дальнейшее заседание II/Комиссии, чтобы подыскать тем временем способ реализации займа, на который можно было бы склонить английскую Делегацию. В промежутке между этим и последним заседанием II/Комиссии Нансен, Тома, Дебрукер и шеф финансового секретариата Лиги Наций, сэр Артур Солтери имели частное свидание со мной у Нансена, где пытались выяснить вопрос, какие формы обеспечения займа могли бы быть представлены Правительством Армении, чтобы они были достаточны для реализации займа без

английской гарантии. Из разговоров выяснилось, что это и есть основное затруднение, ибо наипростейший способ осуществления проектов, посредством гарантии держав, был решительно отвергнут Британской делегацией.

Собеседники, правда, не предлагали, но пытались выяснить, не согласилось бы Армянское Правительство гарантировать этот заем посредством вечных обязательств и залогов. Я, сославшись на отсутствие у меня по этому поводу полномочий, тем не менее выразил непреклонную уверенность, что Советское Правительство Армении никогда не пойдет на гарантию этого свойства, не совместимую с достоинством Республики. После такого моего заявления вопрос в этой плоскости больше не возбуждался.

В дальнейшем разговоре Альбер Тома и Нансен высказали мысли, что им нужно, тем не менее, найти какую-то формулу, которая гарантируя заем, была бы приемлема для Британского Правительства и в качестве таковой формулы предлагали образование Автономной Организации, которая должна была бы, с одной стороны, договориться с Правительством Армении о передаче этой Автономной Организации, на определенных договорных началах, дела орошения указанных в проектах Нансена земель и расселения там обусловленного с армянским Правительством количества беженцев; с другой стороны — эта организация должна войти в сношение с европейскими финансовыми кругами для реализации этого займа. Мои собеседники, по-видимому, предполагали, что эта автономная организация может получить ту гарантию, которую Англия не согласилась дать непосредственно облигациям Армянского Правительства, т. е., как говорил Нансен, это будет своеобразная концессия гуманитарного характера, заранее ограниченная прибылью (равной проценту по займу) концессия, маскирующая заем Армянскому Правительству. Во главе этой автономной организации, по-видимому, мыслился тот же д-р Нансен.

Д-р Нансен очень сожалел, что своевременно не мог об этом поговорить с Армянским Правительством и добавил, что если в П/Комиссии это компромиссное решение пройдет, то он будет просить Парижское Полпредство снестись с Москвой и Эриванью по этому вопросу. В данное же время как он, так и Альбер Тома думают, что если они не предложат никакого компромисса, то тогда английское сопротивление может совсем задушить дело. Они же заинтересованы, хоть как-нибудь, обречь* эту идею, эти проекты от полного провала, надеясь на более благоприятную ситуацию, которую они могут создать в будущем. На мои возражения, что такого рода компромиссные проекты, не говоря уже о том, что они могут оказаться вовсе неприемлемыми для Армянского Правительства, грозят затянуть нетерпящее отлагательство, с точки зрения самого Тома и Нансена, дело размещения беженцев, Нансен ответил, что сравнительно с ходом дела займа для Греции он считает, что дело армянского займа продвигается быстрее и имеет гораздо более благоприятную конъюктуру.

* Так в подлиннике; вероятно, должно быть «оберечь».

23-го сентября состоялось последнее заседание II Комиссии, на котором и была принята резолюция, отражающая указанное выше настроение д-ра Нансена и его сторонников. Резолюция предусматривает назначение Советом 5 Комиссаров, которым будет поручено вести необходимые переговоры как с Правительством Армении, так и с другими державами и предложить Совету устройства Автономной организации статут, который даст ей право заключать все необходимые соглашения, принять в случае необходимости концессию на земли, подлежащие ирригации, и, в случае нужды, выпустить заем. Резолюция при сем прилагается.

Д-р Нансен говорил, что резолюция по необходимости носит широкий характер (концессия и заем), для того, чтобы дать ему возможность большей свободы маневрирования при переговорах с Армянским Правительством. Он продолжает сохранять твердую уверенность, что ему удастся реализовать этот заем в том или ином виде, согласно тех условий, которые ему были указаны в Эривани и Москве. Происшедшую же задержку он считает совершенно неизбежной, как ввиду сложности самой темы (заем для отдельной Советской Республики), так из-за позиции Английского Правительства. Из некоторых слов д-ра Нансена можно предположить, что он смотрит на этот маленький заем как на пробный и первый шаг в деле осуществления более крупного займа для Советского Союза.

В дальнейшем д-р Нансен предполагает обратиться к СНК Армении для окончательного заключения соглашений по вопросам именно финансовой стороны своего проекта и, только договорившись с СНК Армении, привлечь капиталистов и банки, которые он имеет в виду.

Поэтому основным вопросом дальнейшей дискуссии будет только вопрос о формах гарантии со стороны СНК Армении и Союзного Правительства. В частности, необходимо теперь же выяснить нашу точку зрения по вопросу о маскировании займа посредством благотворительной концессии.

25-го сентября вопрос из П/Комиссии был вновь передан в 5-ю Комиссию. Докладчиком был Дебрукер, который произнес большую речь в защиту резолюции П/Комиссии. Он отметил, что Греция и другие государства, приютившие армянских беженцев, не могут нести дальнейших жертв и требуют эвакуации, что представленный проект Нансена вполне осуществим, тем более, что Армянское Правительство в течение нескольких лет уже делает подобное дело, продолжением которого будет работа по проектам Нансена, что пользование водой не может вызвать споров, ибо вода будет взята из бесспорной армянской реки Занги, что местность чрезвычайно богатая, а культура высокая и что для реализации этого плана нет никаких технических затруднений. Докладчик полагал, что так же проста и финансовая сторона вопроса. Он говорит, что экспертами точно установлено, что доходы с этих земель будут очень значительны и что армянское правительство даст свою общую гарантию в обеспечении процентов и амортизации и что даже есть основание думать, что в крайнем случае можно получить гарантию этого займа и со стороны общесоветского государственного Банка. Он добавляет, что нельзя останавливаться

в этом вопросе перед формальными затруднениями, если бы они не были* и надо настойчиво продолжать и завершить дело, столь «прекрасно начатое Нансеном». В качестве бельгийского делегата (а не как докладчик) Дебрукер заявляет, что государства — члены Лиги наций могли бы принять на себя обязательства в отношении этого займа, имея в виду свои прежние обещания армянам и что это «вопрос чести».

Продолжая речь, он говорит о серии формальных обещаний, данных Правительствами и самой Лигой армянскому народу. Речь Дебрукера, в общем обстоятельна и красивая по форме, произвела огромное впечатление; председатель благодарит докладчика. Греческий представитель Папа поддерживает Дебрукера, обещая содействие своего правительства. Неожиданно для всех представитель Голландии (Франсуа) заявляет, что как проект д-ра Нансена, так и речь Дебрукера представляются ему политическими и должны быть обсуждены в 6-й Политической Комиссии, почему и Голландия воздерживается от голосования. Затем резолюция принимается единогласно.

Речь Дебрукера чрезвычайно не понравилась эмигрантским деятелям. Кадет Астров выражал в кулуарах армянским деятелям свое возмущение, считая, что резолюция в сущности представляет «международную рекомендацию займа Советам».

В заключение полагаю необходимым отметить, что все совещания, прения и речи, связанные с этим вопросом, объективно сыграли большую роль в деле положительной пропаганды устойчивости, организации и огромных достижений во всех областях жизни Советских Республик, так же как и для нашей национальной программы.

Заявление таких противников Советской власти, как Альбер Тома и Дебрукер, что Советское Правительство Армении есть подлинно народное, что оно выполнило огромную организационную задачу и достойно доверия,— произвело огромное впечатление в кулуарах Лиги Наций. Русские и грузинские эмигрантские контрреволюционные деятели, появившиеся на собрании Лиги, были ошеломлены этой пропагандой в пользу Советской Армении и ее Правительства и положительным отношением всех армянских обществ к Советской власти и даже делали попытки уменьшить эффект нашей моральной победы выпадами против д-ра Нансена и Советских республик.

С комприветом Пирумов[8]

верно (подпись)

ЦГАОР Арм. ССР, ф. 40/113, оп. 3, д. 264, лл. 206—207.

---

* Так в подлиннике; вероятно, должно быть «и были».

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ֆ. Նանսենի՝ Երևանում եղած ժամանակ ՀԽՍՀ Ժողկոմխորհին կից Գաղթականական հանձնաժողովը Նանսենի և նրա հանձնաժողովի մասնակցությամբ ունեցել է չորս նիստ։ Հունիսի 17-ին, Նանսենի հանձնաժողովի ժամանման օրը, նիստը տեղի է ունեցել Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասքանազ Մռավյանի նախագահությամբ։ Նիստը կրում էր կազմակերպչական և ինֆորմացիոն բնույթ։ Նանսենը իր ելույթում հակիրճ ծանոթացրեց հայ գաղթականների դրությանը Հունաստանում ու այլ տեղերում։ Իր ելույթում նա նշում է, որ արտասահմանում մեծ համակրանքով են վերաբերվում թե՛ դեպի Սովետական Հայաստանը և թե՛ դեպի գաղթականությունը։ Նանսենը նկարագրում է նաև Հյուսիսային Սիրիայում ապրող 50 000-ից ավելի հայ գաղթականների ծանր դրությունը։ Մռավյանի այն հարցին, թե արդյոք եվրոպական կառավարություններից որևէ մեկը պաշտոնական հայտարարություն արե՞լ է գաղթականներին տեղավորելու և բնակեցնելու ծախսերը իր վրա վերցնելու մասին, թե՞ պետք է հույսը դնել միմիայն բարեգործական մարմինների վրա, Նանսենը պատասխանում է, որ բացի բարեգործական ընկերություններից հույս կա օգնություն ստանալ նաև կառավարություններից, սակայն նրանցից ոչ մեկը պաշտոնական հայտարարություն չի արել և որ միայն Հունաստանն է խոստացել և գրավոր, և բանավոր աջակցություն։

Այդ օրվա նիստում սկզբնական և ընդհանուր հարցերը պարզելուց հետո, հանձնաժողովը ծանոթանում է ներկայացված ոռոգման ծրագրերին (տե՛ս ՀՍՍՌ ՀՕՒՑ ՊԿԱ, ֆ. 40 113, ց. 3, գ. 335, թ. 21—25)։

Երկրորդ նիստը տեղի է ունեցել հունիսի 19-ին, Արտաշես Երզնկյանի նախագահությամբ։ Այն կրել է զուտ գործնական-տեխնիկական բնույթ, հանձնաժողովի անդամները ծանոթացել են ոռոգման առաջարկվող ծրագրերին և այլ հարցերին (նույն տեղում, էջ 26—28)։

Երրորդ նիստը տեղի է ունեցել հուլիսի 1-ին, Ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանի նախագահությամբ։ Հրապարակվող փաստաթուղթը այդ նիստի արձանագրությունն է։

Վերջին նիստը տեղի է ունեցել 1925 թ. հուլիսի 2-ին, Ա. Մռավյանի նախագահությամբ (նույն տեղում, էջ 35—38)։

2 Տեխնիկական զեկուցագիրը ներկայացված է հետագայում (տե՛ս ՀՍՍՌ ՀՕՒՑ ՊԿԱ, ֆ. 10/113, ց. 3, գ. 335, էջ 39—40)։

3 Հինգ միլիոն ֆունտ ստերլինգը (հաշվարկման ոսկով), որ թուրք կառավարությունը 1915 թ. մուծել էր Բեռլինի բանկը և որը գերմանացիներից հետո գրավվել էր դաշնակիցների կողմից, մեծ մասամբ (թերևս բացառապես) հայկական գումարներ էին։

4 Պաշտոնյա Մակինսկին դեռ XX դ. սկզբին բազմիցս միջնորդություն էր հարուցել ցարական կառավարության առաջ՝ կոնցեսիոն կարգով Մեծ Սարդարաբադի դաշտի մոտ 80 000 դեսյատին տարածություն ոռոգելու նպատակով։ Հետագայում այդ միջնորդությանը միացավ «հնարին մեծության» շրջանի գեներալ, իշխան Ենգալիչև-Բելոզերսկին։ Բայց Սարդարաբադի դաշտի ոռոգման շինարարության խնդիրը մնաց միայն փաստական հետազոտության նախօրյակին։ Ըստ երևույթին Նանսենին դիմել էր նույն Պաշտոնյա Մակինսկին։

5 Թոմա (Thomas) Ալբեր (1878—1932), ֆրանսիական քաղաքական գործիչ. 1925 թ. ռեֆորմիստ, 1919—32 թթ. Ազգերի լիգային կից Աշխատանքի միջազգային բյուրոյի դիրեկտոր։

6 Ռադիչ (Radic) Ստեֆան (1871—1928), խորվաթիայի քաղաքական գործիչ։ 1925 թ. մասնակցել է Պաշիչի սերբիական մեծապետական շովինիստական կառավարությանը։ [illegible] վիրավորվել է սերբիական շովինիստի կողմից։

7 Պամս (Jules Pams), Ֆրանսիայի ներկայացուցիչ Ազգերի լիգային կից հայկական փախստության հարցի հանձնաժողովի նախագահ։ Այդ հանձնաժողովի անդամներն էին՝ Անգլիայի ներկայացուցիչ Մ. Մակդոնալդ (ինժեներ-ոռոգագետ, լիբերալ), Իտալիայի ներկայացուցիչ Մ. Պիտրիկին (Իտալական պետական բանկի ներկայացուցիչը Փարիզում) և Գերմանիայի ներկայացուցիչ Բիրկմանը (բանկիր, գերմանական ֆինանսների մինիստրության գլխավոր աշխատող)։

8 Փիրումով Սեմյոն (Արմենակ) Գրիգորի (1888—1937), անդրկովկասյան ռեսպուբլիկայի շարժման ակտիվ մասնակից։ 1922—33 թթ. Ս. Օրջոնիկիձեի առաջարկությամբ դիվանագիտական աշխատանքի էր ուղարկվել Բեռլին և Փարիզ։

## ФРИТЬОФ НАНСЕН В АРМЕНИИ

Г. В. ШИРМАЗАН

(Резюме)

Знаменитый ученый-полярник Фритьоф Нансен известен как выдающийся борец за мир. Он первым из иностранных крупных деятелей в 1921 г. пришел в помощь голодающим Поволжья. Он поднял свой голос в защиту сотен тысяч беженцев-армян. Империалистические государства, в значительной мере ответственные в трагедии армянского народа, безразлично отнеслись к его призывам. Нансен перед Лигой наций настойчиво ставил вопрос об устройстве армян-беженцев. И Лига наций вынуждена была внять голосу Нансена. В 1925 г. она направила в Советскую Армению специальную комиссию во главе с Нансеном, поручив ей выяснить возможность проведения в Советской Армении ирригационных работ и расселения на вновь осваиваемых землях беженцев-армян. Комиссия прибыла в Армению 17 июня 1925 г. и пробыла здесь до 2 июля. Нансен и его спутники с большим радушием были приняты правительством и народом Советской Армении.

Из публикуемого протокола одного из последних заседаний, состоявшегося 1 июля 1925 г. под председательством Председателя Совета Народных Комиссаров Армянской ССР С. И. Амбарцумяна, видно, с каким вниманием относился Нансен к взятой на себя миссии. Особенно остро стоял вопрос изыскания средств для проведения новых ирригационных работ и устройства новых поселков для переселения беженцев. Надеяться на помощь со стороны европейских держав не приходилось. Оставался единственный выход — получить необходимые суммы в виде займа у европейских банков, которые требовали неприемлемых для Советского правительства гарантий. Из второго публикуемого документа — письма советника постоянного представительства Союза ССР во Франции Семена (Симоника Пирумова, адресованного Закавказскому краевому комитету ВКП(б) и Совету Народных Комиссаров ССРА, видны трудности, связанные с получением этого так называемого «армянского заема». Известно, что Нансен прилагал большие, но безуспешные усилия для получения требуемого заема. Все благородные усилия Нансена наталкивались на ледяное бездушие империалистических государств и безразличие Лиги наций. Благородную задачу переселения армян-беженцев в Советскую Армению удалось осуществить лишь усилиями Советского Союза.